

«ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հավելված

«Վանաձորի Հ.Թումանյանի անվան

սլեռական համալսարան» ՊՈԱԿ-ի

ռեկտորի 30.05.2016 թ. թիվ 343 Լ/Կ հրամանի

ԿԱՐԳ

ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԼՈՒՄԱՆԿԱՐՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՍՐՑՈՒՅԹԻ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ, ԱՆՑԿԱՑՄԱՆ, ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՍՓՈՓՄԱՆ

Ընդունված է ՎՊՀ-ի գիտխորհրդի կողմից

Արձանագրություն թիվ 5 26.05.2016թ.

Փոփոխվել է՝

Արձանագրություն թիվ 2 27.02.2020թ.

Վանաձոր

2016թ.

## **1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1.1. Դպրոցականների լուսանկարչական աշխատանքների մրցույթի կազմակերպման, անցկացման, արդյունքների ամփոփման կարգը (այսուհետ՝ Կարգ) սահմանում է պետական և ոչ պետական հանրակրթական և ավագ դպրոցների ու վարժարանների աշակերտների շրջանում լուսանկարչական աշխատանքների մրցույթի կազմակերպման, անցկացման, արդյունքների ամփոփման ընթացակարգը:

## **2. ՄՐՑՈՒՅԹԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

2.1. Մրցույթի անցկացման հիմնական նպատակներն են.

- օժտված դպրոցականների բացահայտումը,
- դպրոցականների ստեղծագործական մտածելակերպի զարգացմանը նպաստելը,
- ստեղծագործական գործունեության նկատմամբ հետաքրքրության բացահայտումը և զարգացումը,
- լուսանկարչական արվեստի միջոցով դպրոցականների հայրենասիրական, մշակութային դաստիարակությանը նպաստելը:

2.2. Մրցույթի անցկացման հիմնական խնդիրներն են.

- հնարավորություն ընձեռել դպրոցականներին իրականացնելու իրենց ստեղծագործական կարողությունները,
- լուսանկարչական արվեստի միջոցով գեղեցիկի նկատմամբ հետաքրքրության խթանումը,
- հոգևոր, բարոյական, հայրենասիրական զգացմունքների, գեղագիտական ճաշակի զարգացումը:

## **3. ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ**

3.1. Մրցույթին կարող են մասնակցել պետական և ոչ պետական հանրակրթական և ավագ դպրոցների ու վարժարանների աշակերտները:

3.2. Մրցույթի կազմակերպման նպատակով համագործակցության և կապերի բաժնի վարիչի առաջադրմամբ Համալսարանի ռեկտորի հրամանով ստեղծվում է մրցութային հանձնաժողով:

3.3. Մրցույթի անցկացման ժամկետից առնվազն 1 ամիս առաջ համագործակցության և կապերի բաժնը տեղեկացնում է դպրոցներին այդ մրցույթի մասին՝ նշելով աշխատանքների ներկայացման ստույգ ժամկետը և անհրաժեշտ պայմանները: Անցկացվող միջոցառման մասին տեղեկատվություն է տեղադրվում նաև Համալսարանի կայքում:

3.4. Հայտարարված ժամկետի ավարտից հետո ներկայացված աշխատանքները չեն ընդունվում:

#### 4. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

4.1. Աշխատաքները գնահատվում են համաձայն մրցույթին ներկայացված լուսանկարների ժանրային առանձնահատկությունների /նատյուրմորտ, բնապատկեր (պեյզաժ), դիմանկար, ֆոտոլրագրություն/:

4.2. Լուսանկարները գնահատվում են հանձնաժողովի կողմից 20-բալանոց համակարգով՝ ըստ միավորների (ըստ Հավելվածի):

#### 5. ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ

5.1. Մրցույթի հաղթողներ են համարվում այն դպրոցականները, որոնց ներկայացված լուսանկարները գնահատվել են.

20 միավոր՝ 1-ին կարգի դիպլոմ,

19 միավոր՝ 2-րդ կարգի դիպլոմ,

18 միավոր՝ 3-րդ կարգի դիպլոմ,

5.2. Մրցութային հանձնաժողովի որոշմամբ առանձին մասնակիցներ կարող են արժանանալ նաև հատուկ կամ խրախուսական մրցանակի:

5.3. Մրցույթի հաղթողները, հատուկ ու խրախուսական մրցանակների արժանացած դպրոցականները պարգևատրվում են դիպլոմներով, շնորհակալագրերով:

5.4. Մրցույթի հաղթողներին որոշելուց հետո լավագույն աշխատանքները կարող են ցուցադրվել Համալսարանում:

5.5. Մրցույթի ավարտից հետո լուսանկարները պահպանվում են համագործակցության և կապերի բաժնում 5 տարի, որից հետո ոչնչացվում են:

**Հավելված**

Աշխատանքների գնահատման հիմնական չափանիշներն են.

- լուսանկարների սյուժեների յուրօրինակությունը 4 միավոր,
- լուսանկարների համապատասխանումը մրցույթի թեմային 5 միավոր,
- լուսանկարի գեղարվեստական և տեխնիկական որակները 3 միավոր,
- ստեղծագործական մոտեցման առկայությունը 8 միավոր: